ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«9» հունիսի 2026 թ. N 85-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի ապրիլի 21-ի N 59-Ա հրամանի 2-րդ կետը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունիսի 5-ի N 80-Ա հրամանի 1-ին կետը, ինչպես նաև հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակում գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների լրացուցիչ պարզաբանման, «ԻՄՊԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) լսված լինելու իրավունքի ապահովման և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման իրական և երաշխավորված հնարավորության ապահովման անհրաժեշտությունը՝

1. արձանագրելով, որ 2026 թվականի մայիսի 6-ին նշանակված լիցենզավորող հանձնաժողովի նիստին Ընկերության կողմից մասնակցություն չի ապահովվել, և վարչական վարույթի տվյալ փուլում գործի նյութերում առկա չեն նախաձեռնված վարչական վարույթով Ընկերությունից պահանջված և հարցի ամբողջական, լրիվ և օբյեկտիվ քննության համար անհրաժեշտ ամբողջական փաստաթղթերը,

2. իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ վարչական վարույթի առանձնահատկություններով, սույն գործի փաստական հանգամանքներով, ինչպես նաև վարույթի մասնակցի կողմից նախկինում վարույթի առնչությամբ հայտնած դիրքորոշումն ու տեղեկատվությունը բազմակի և օբյեկտիվ ստուգման ենթարկելու,

վարույթում քննության նյութերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու և փաստերի հետ դրանք համադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հարկավոր է նշանակել լիցենզավորող հանձնաժողովի ևս մեկ նիստ, այդ մասին պատշաճ ծանուցելով վարույթի մասնակցին՝ վերջինիս մասնակցությունը և լսված լինելու իրավունքն երաշխավորելու նպատակով:

3. հաշվի առնելով նաև, որ վարչական վարույթի շրջանակում վերջնական որոշման ընդունումից առաջ անհրաժեշտ է ապահովել Ընկերության՝ բացատրություններ, առարկություններ, լրացուցիչ փաստաթղթեր և ապացույցներ ներկայացնելու իրական հնարավորություն, ինչի արդյունքում անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն և պարզել նման ապահովման իրավական ու փաստական շրջանակը, այդ թվում՝ իրացման հնարավոր մեխանիզմների առկայությունն ու արդյունավետությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի ապրիլի 21-ի N 59-Ա հրամանի 2-րդ կետով նախաձեռնված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել ևս 10 օրով և սահմանել մինչև 2026 թվականի հունիսի 19-ը:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6/9/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ